—«Շնորհաւոր ըլի Քրիստոսի տպաշխարանքը, ուրախ տարի գայ ձեր վրայ», որին պատասխանում են.—«Օրհնեալ է տպաշխարանքը Քրիստոսի»։

Այնուհետև, վերադարձին նրանք գետի ափերից քաղում են «ձեռք-պաչուք». դա մի տեսակ դալար խոտ է, և դրանով շնորհաւորում իրենց կեսրոջ և կեսրայրի պասը։ Իսկ նոր փեսաները շրջում են իրենց ազգականների տները, շնորհաւորում և ստանում են մի գլուխ շաքար կամ փող։

Հետաքրքրական է նաև այն, որ նոյն օրը պառաւ կանայք մի սոխի վրայ անց են կացնում եօթ հատ հաւի փետուր, յետոյ մի փայտի վրայ ամրացնելով կախում են տան երդիքից կամ առաստաղից։ Սրան տեղացիները «Գանդլափաշա» են կոչում. ասում են, թէ ով որ պասն ուտի, «Գանդլափաշան» կը պատժի։ Իւրաքանչիւր շաբաթի վերջը մի փետուրը հանում, ձգում են. վերջին շաբաթը՝ Զատկին սոխը ցած են բերում և դցում կերակրի մէջ։

Ծաղկազարդ։ Ծաղկազարդին Փէրիացիք ասում են «Ծառզարդար»։ Այդ օրն իւրաքանչիւր մարդ առաւօտը վաղ վեր կենալով շտապում է եկեղեցի։ Իսկ երիտասարդներն ուռենու ճիւղերից կտրելով՝ տանում են եկեղեցի և դնում սեղանի առաջ, որ քահանան օրհնէ. ժամերգութիւնից յետոյ օրհնուած ուռենուց ամեն մէկը մի փոքրիկ ճիւղ ձեռքն առած տուն է վերադառնում. այդ ճիւղը դնում կաթի սալակի տակ, որպէսզի կաթը «բարաքեաթով» լինի, իսկ երեխաները խմբեր կազմած՝ ճիւղերը ձեռքերին, տնից տուն են շրջում, երգելով.

Պարկը բացէք
Մի բուռ ածէք
Ծաղկազարդ է այսօր։

Նրանք տներից ստանում են չամիչ, չարազ և աղանձ։

Զարչարանաց շաբաթ։ Աւագ Երեքշաբթի երեկոյեան եկեղեցում տան երեխայի շապիկ են հագցնում, ձեռներին մոմ տալիս և սեղանի առաջ կանգնեցնում են, երբ տասը յիմար և իմաստուն կուսանաց առակը կարդում են, երեխանե-